## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
## ՈՐՈՇՈՒՄ

ք.Աշտարակ 2025թ. դեկտեմբերի 11 -ին, N 400-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՈՒՄ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԿԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ԵՎ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10–րդ հոդվածի 12-րդ մասի 12-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2025 թվականի դեկտեմբերի 1-ի N ԴԽ/15.2/41425-2025 գրությունը՝

**որոշում եմ.**

1. 2026 թվականի հունվարի 1-ից մինչև 19-ը Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի համայնքներում 2026 թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա գյուղատնտեսական կենդանիների համատարած հաշվառման աշխատանքները կազմակերպելու և անցկացնելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 12/11/2025 15:16:27 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս.ՄՈՎՍԻՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզպետի 2025թ.
դեկտեմբերի 11 N 400-Ա
որոշման

ԿԱԶՄ

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԿԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ԵՎ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Ա. Ղազարյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ /հանձնաժողովի նախագահ/

Թ. Թովմասյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ

Գ. Հարությունյան- Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ

Օ. Խաչատրյան - Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Արագածոտնի մարզային կենտրոնի գլխավոր տեսուչ /համաձայնությամբ/

Գ. Եգորյան - Հայաստանի Հանրապետության վիճագրական կոմիտեի Արագածոտնի մարզային վարչության պետ /համաձայնությամբ/

**ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար՝**

**Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**